ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՀՀԿԳՆՇՀԱՊՁԲ-15/3-17/1-1>>

ք. Երևան <<06>> <<05>> 2017թ.

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Պատվիրատու/, մի կողմից, և <<Սմարթլայն>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Կատարող/ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Պատվիրատուին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված գրասենյակային ապրանքները /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Կատարողը Ապրանքը մատակարարում է Պատվիրատուին Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Կատարողը Ապրանքը հասցնում է Պատվիրատուին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2 հասցեով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ

ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Կատարողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Կատարողն իրավունք ունի՝

3.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Պատվիրատուից պահանջել հատուցելու վնասները, եթե Կատարողը Պատվիրատուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Պատվիրատուից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Պատվիրատուի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Կատարողը պարտավոր է՝

3.4.1 Պատվիրատուին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Պատվիրատուին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Պատվիրատուին հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պատվիրատուին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 1121928 (մեկ միլիոն հարյուր քսանմեկ հազար ինը հարյուր քսանութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Կատարողն Ապրանքը հանձնում է Պատվիրատուին՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ և Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը:

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Պատվիրատուն Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված

կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Պատվիրատուն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Կատարողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Պատվիրատուին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Պատվիրատուն ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Կատարողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

9.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու

վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն Ք. Երևան, Կ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011005015 /նախարարի աշխ./ Հ/Հ 900011005023 /նախ-ն աշխ./ Հ/Հ 900011182012 /նախ-ն աշխ. ԲՈՀ/ ՀՎՀՀ 02512868 Աշխատակազմի ղեկավար՝ ----------Ն. Հարությունյան /ստորագրություն/ Կ.Տ	«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ ք. Երևան, Վարդանանց 110 <<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ Հ/Հ 163007031509 ՀՎՀՀ 01548908 Տնօրեն՝ ----------Ս. Ղարիբյան /ստորագրություն/ Կ.Տ

06 05 **Հավելված 1**
<< >> << >> 2017թ կնքված
ՀՀԿԳՆՇՀԱՊՁԲ-15/3-17/1-1 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկա են հանդիսանում ներքոնշված տեխնիկական բնութագրին համապատասխան գրասենյակային ապրանքները /այսուհետ՝ Ապրանք/

Չափաբաժինը	Ապրանքի անվանումը	Ապրանքի բնութագիրը
1	Օրագրեր և ամենօրյա նշուների տետրեր	Օրատետր A5, կազմված արհեստական կաշվե կազմից, նախատեսված 2017 թվականի համար
2	Թուղթ օֆսեթ	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ
3	Ամրակ մետաղյա փոքր	Փոքր, գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ
4	Շտրիխներ	Բաղադրանյութ վրձինով, պլաստամսե տարայի մեջ
6	Գրիչ գնդիկավոր	Գնդիկավոր, թանաքի գույնը կապույտ,սև,կարմիր տարբեր տեսակի կառուցվածքով, 0,4:0.5 մմ ծայրով
7	Գրիչ գելային	Գրիչ, 0,5 մմ ծայրով,կապույտ, սև, (գել)
8	Դակիչ քանոնով	Ծակոտիչ գրասենյակային, մինչև 36 թերթ դակելու համար
9	Թղթապանակ թելով, թղթյա	Թղթե, թելով, Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, Բ (Б) տիպի, թելակապերով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3, հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ, ԳOUS 17914-72 կամ համարժեք
10	Գրենական պիտույքների դասավորման հարմարանքներ և պարագաներ	Գրենական պիտույքների դասավորման հարմարանքներ և պարագաների լրակազմ՝/12-14 հատ/
11	Թղթապանակ արագակար, թղթյա	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար
12	Թղթապանակ կոշտ կազմով	Թղթապանակ /ռեգիստր/ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար
13	Թղթապանակ պոլիմերային թաղանթ, ֆայլ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ (ֆայլ), A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորությամբ
15	Թանաքի բարձիկներ-2	Թանաքի բարձիկ՝ կապույտ գույնի
16	Թուղթ նշումների, տրցակով	Թուղթ նշումների համար, գունավոր, կպչուն, տարբեր չափերի, տրցակներով:
19	Կարիչ 20-50 թերթի համար	Գրասենյակային կարիչ 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար
20	Կարիչի մետաղալարե կապեր-1	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ
21	Կարիչի մետաղալարե կապեր-2	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 24 մմ/6 մմ, 26 մմ/6 մմ

22	Կարիչի մետաղալարե կապեր-3	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 23 մմ/15 մմ,
23	Մատիտներ	Մատիտ հասարակ, ռետինով սև կարծրությունը HB
24	Քանոն պլաստիկ	Քանոն պլաստիկ 30սմ
25	Մկրատ գրասենյակային	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասե բռնակով, 18 սմ երկարությամբ:
26	Ռետին հասարակ	Ռետին՝ փոքր, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար
27	Դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD	Դատարկ սկավառակ, առանց տուփի DVD
28	Սոսնձամատիտ գրասենյակային	Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար
29	Հաշվասարք գրասենյակային	12 նիշանի սեղանի 18X13.5 սմ չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա ինքնալիցքավորվող
30	Փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշարեր	թղթադարակ, հարկերով, մետաղական, 3 նիստով, նախատեսված A4 (210 x 297) մմ ձևաչափի թերթերի համար:
31	Սեղմակ փոքր	Մետաղական, լայնությունը 25 մմ
32	Սեղմակ միջին	Մետաղական, լայնությունը 32 մմ
33	Գրասենյակային գիրք, մատյան 70-200 էջ տողանի, սպիտակ էջերով	գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով
34	Ապակարիչ	Գրասենյակային ապակարիչ՝ N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար
35	Սրիչներ	Սրիչ սովորական, գրաֆիտե մատիտի համար

<u>Բոլոր չափաբաժինների համար</u>

1. Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
2. Փոխադրումը և բեռնաթափումը Կատարողի կողմից՝ ամբողջ քանակությունը հանձնելով ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի քարտուղարության տնտեսավարման և սպասարկման բաժնին:

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Տ. Ղարիբյան

06 05 Հավելված 2
<< >> << >> 2017թ կնքված
N ՀՀԿԳՆՇՀԱՊՁԲ-15/3-17/1-1 գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

Չափաբաժին	Ապրանքի անվանումը	Չափման միավոր	Միավորի գինը	Ենթակա է գնման 2017թ պետական բյուջեի ծրագրերից՝						Ընդամենը	
				01.01.01.04 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարների աշխատակազմերի մասով/ ծրագիր		09.08.01.02 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով/ ծրագիր-ՀՀ ԿԳՆ		09.08.01.02 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով/ ծրագիր-ՀՀ ԿԳՆ ԲՈՀ			
				2-րդ եռամսյակում՝ մինչև 31.05.2017թ							
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	Օրագրեր և ամենօրյա նշուների տետրեր	հատ	0.950	10	9.500	26	24.700	10	9.500	46	43.700
2	Թուղթ օֆսեթ	տուփ	1.399	50	69.950	216	302.184	40	55.960	306	428.094
3	Ամրակ մետաղյա փոքր	տուփ	0.080			49	3.920			49	3.920
4	Շտրիխներ	հատ	0.160			160	25.600			160	25.600
6	Գրիչ գնդիկավոր	հատ	0.065	50	3.250	310	20.150	50	3.250	410	26.650
7	Գրիչ գելային	հատ	0.080	50	4.000	101	8.080	19	1.520	170	13.600
8	Դակիչ քանոնով	հատ	1.350			23	31.050	2	2.700	25	33.750
9	Թղթապանակ թելով, թղթյա	հատ	0.060			500	30.000			500	30.000

10	Գրենական պիտույքների դասավորման հարմարանքներ և պարագաներ	տուփ	1.450			10	14.500			10	14.500
11	Թղթապանակ արագակար, թղթյա	հատ	0.055			500	27.500			500	27.500
12	Թղթապանակ կոշտ կազմով	հատ	0.540	100	54.000					100	54.000
13	Թղթապանակ պոլիմերային թաղանթ, ֆայլ	հատ	0.0069			10000	69.000			10000	69.000
15	Թանաքի բարձիկներ-2	հատ	0.280			4	1.120	1	0.280	5	1.400
16	Թուղթ նշումների, տրցակով	հատ	0.115			45	5.175			45	5.175
19	Կարիչ 20-50 թերթի համար	հատ	1.350	10	13.500	55	74.250	5	6.750	70	94.500
20	Կարիչի մետաղալարե կապեր-1	տուփ	0.050			240	12.000	10	0.500	250	12.500
21	Կարիչի մետաղալարե կապեր-2	տուփ	0.075	40	3.000					40	3.000
22	Կարիչի մետաղալարե կապեր-3	տուփ	0.350			5	1.750			5	1.750
23	Մատիտներ	հատ	0.026	50	1.300	300	7.800			350	9.100
24	Քանոն պլաստիկ	հատ	0.065	10	0.650	15	0.975			25	1.625
25	Մկրատ գրասենյակային	հատ	0.180	10	1.800	30	5.400			40	7.200
26	Ռետին հասարակ	հատ	0.025					20	0.500	20	0.500
27	Դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD	հատ	0.085			100	8.500			100	8.500
28	Սոսնձամատիտ գրասենյակային	հատ	0.110	39	4.290	154	16.940	16	1.760	209	22.990
29	Հաշվասարք գրասենյակային	հատ	1.450			40	58.000			40	58.000
30	Փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշարեր	հատ	2.550	10	25.500	20	51.000			30	76.500

31	Սեղմակ փոքր	հատ	0.018			504	9.072			504	9.072
32	Սեղմակ միջին	հատ	0.023			504	11.592			504	11.592
33	Գրասենյակային գիրք, մատյան 70-200 էջ տողանի, սպիտակ էջերով	հատ	0.680			35	23.800			35	23.800
34	Ապակարիչ	հատ	0.140			23	3.220	6	0.840	29	4.060
35	Սրիչներ	հատ	0.035					10	0.350	10	0.350
	Ընդամենը				190.740		847.278		83.910		1121.928

Պատվիրատու

Ա. Հարությունյան

Կատարող

Տ. Ղարիբյան

06 05 Հավելված 3
<< >> << >> 2017թ կնքված
N ՀՀԿԳՆՇՀԱՊՁԲ-15/3-17/1-1 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ.դրամ

Չափաբաժին	Ապրանքի անվանումը	Ենթակա է վճարման 2017թ պետական բյուջեի ծրագրերից՝											
		01,01,01,04,Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարի աշխատակազմի մասով/ ծրագիր				09,08,01,02 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով/ ծրագիր - ՀՀ ԿԳՆ				09,08,01,02 Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով/ ծրագիր - ՀՀ ԿԳՆ ԲՈՀ			
		Ծրագրի հաշվեհամար - ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011005015 /4261 հոդված/				Ծրագրի հաշվեհամար - ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011005023 /4261 հոդված/				Ծրագրի հաշվեհամար - ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011182012 /4261 հոդված/			
		1-ին կիսամյակ	9 ամիս	Տարի, բայց ոչ ուշ, քան 25.12.2017թ	ընդամենը	1-ին կիսամյակ	9 ամիս	Տարի, բայց ոչ ուշ, քան 25.12.2017թ	ընդամենը	1-ին կիսամյակ	9 ամիս	Տարի, բայց ոչ ուշ, քան 25.12.2017թ	ընդամենը
1	Օրագրեր և ամենօրյա նշուների տետրեր												
2	Թուղթ օֆսեթ												
3	Ամրակ մետաղյա փոքր												
4	Շտրիխներ												
6	Գրիչ գնդիկավոր												
7	Գրիչ գելային												
8	Դակիչ քանոնով												
9	Թղթապանակ թելով, թղթյա												
10	Գրենական պիտույքների դասավորման հարմարանքներ և պարագաներ												

11	Թղթապանակ արագակար, թղթյա												
12	Թղթապանակ կոշտ կազմով												
13	Թղթապանակ պոլիմերային թաղանթ, ֆայլ												
15	Թանաքի բարձիկներ-2												
16	Թուղթ նշումների, տրցակով												
17	Նամակի ծրար A5 ձևաչափի												
18	Ծրար մեծ A4 ձևաչափի համար												
19	Կարիչ 20-50 թերթի համար	96.000	165.000	190.740	190.740	479.000	847.278	847.278	847.278	32.000	83.910	83.910	83.910
20	Կարիչի մետաղալարե կապեր-1												
21	Կարիչի մետաղալարե կապեր-2												
22	Կարիչի մետաղալարե կապեր-3												
23	Մատիտներ												
24	Քանոն պլաստիկ												
25	Մկրատ գրասենյակային												
26	Ռետին հասարակ												
27	Դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD												
28	Սոսնձամատիտ գրասենյակային												
29	Հաշվասարք գրասենյակային												
30	Փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշարեր												

31	Սեղմակ փոքր												
32	Սեղմակ միջին												
33	Գրասենյակային գիրք, մատյան 70-200 էջ տողանի, սպիտակ էջերով												
34	Ապակարիչ												
35	Սրիչներ												

Պատվիրատու

_____Ն. Հարությունյան

Կատարող

_____Տ. Գրիգորյան